ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

**<<ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ**


✉ 2701 ՀՀ Շիրակի մարզ գ.Ամասիա փողոց 2 N 19

☎ 0 (246) 2-21-21,


N ԱԱԿ – Գ 10/15 <<19>> 01 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

*Հարգելի մասնակից*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ԱԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/4-1/2015»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի գ.Ամասիա փողոց 2 թիվ 19 հասցեով, մինչև 2015թ. Հունվարի 30-ը ժամը 14:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Նազիկ Խաչատրյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը,օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, Շիրակի մարզի գ.Ամասիա փողոց 2 թիվ 19 հասցեով,տնօրենի սենյակում, 2015թ. հունվարի 30-ը ժամը 14:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում «Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի,բժշկական նշանակության ապրանքների և պատվաստանյութերի ձեռքբերումը:

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և պատվաստանյութերի մատակարարման (որոնք կազմված են՝ <u>**190**</u> չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ/ գնային առաջարկ (Հավելված 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ,ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պատադիր չէ:

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ annamkoyan@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով,Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է,որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում են ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերը և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ տվյալները:

*Հարգանքով՝*

«Ամասիայի առողջության կենտրոն» ՓԲԸ տնօրեն Ա. Մկոյան